ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին» Կ-227-15.12.2017-ՊԻՄԻ-011/0, «Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-227[1]-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 և Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Կ-227[2]-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 ՀՀ օրենքների նախագծերում կատարված փոփոխությունների և լրացումների վերաբերյալ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավոր Հրայր Թովմասյան	1-ից 11-րդ հոդվածներ	Առաջարկվում է նախագիծը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** ***Հոդված 1.*** «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-254-Ն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Գործադիր իշխանության համակարգում գործող վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահին իրականացվող լիազորությունների իրականացման նպատակով տեսչական մարմիններ կարող են ստեղծվել մինչև նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնը ստանձնելու օրը»:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը համապատասխանաբար լրամշակվել է: Իսկ «Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-2271-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 և Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Կ-2272-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 ՀՀ օրենքների նախագծերը հանվել են փաթեթից:	Ընդունվել է:

			Հոդված 11. Օրենքի ուժի մեջ մտնելը 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»: Միևնույն ժամանակ, առաջարկվում է նախագծերի փաթեթից հանել «Քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Կ-2271-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 և Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում եւ փոփոխություն կատարելու մասին» Կ-2272-15.12.2017-ՊԻՄԻ-011/0 ՀՀ օրենքոների նախագծերը:		